98 Սուրբ ես (3), Տէր,

1. Սուրբ ես (3), Տէր,
Եհովա, զորաց Աստված.
Տիեզերք, ամեն բաներ՝
Քու զորեղ խոսքով ստեղծված:
Բոլորտիքդ երբ կեցան,
Աչքդ խիստ ուրախացավ.
Հայնժամ լսվեցան երգեր՝
Սուրբ ես (3), Տէր:

2. Սուրբ ես (3), Տէր,
Մեծ Եհովա, այժմ և միշտ:
Թեպետ հող, մոխիր ենք, Տէր,
Կսիրենք պաշտել Քեզ միշտ:
Աշխարհես անարգված,
Բայց անկե մեզ ես փրկած.
Միաբան կերգենք Քեզ, Տէր,
Սուրբ ես (3), Տէր:

3. Սուրբ ես (3), Տէր,
Հաղթական զորքերն կերգեն,
Եվ փրկյալ անթիվ ազգեր
Քեզ պիտի երկրպագեն:
Եվ հրեշտակք, սուրբերն ամեն
Ցնծության ձայն վերցնեն,
Միաբան լսվին երգեր՝
Սուրբ ես (3), Տէր: